ՎԱՀՐԱՄՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

XII դ. երկրորդ կեսին և XIII դ. սկզբին Վրաստանի հարավ-արևելյան սահմանների ամրացմամբ մտահոգված վրաց Բագրատունիների աջակցությամբ և Զաքարյանների գլխավորությամբ սելջուկյան լծից ազատագրված հայկական հողերում հաստատվեցին մի շարք իշխանություններ։ Դրանցից էր Վահրամյանների իշխանությունը, որը պատկանում էր Զաքարյան իշխանական տոհմից սերված Վահրամի ժառանգներին։ Վահրամյանների տոհմի հիմնադրի մասին սկզբնաղբյուրները չափազանց կցկտուր տեղեկություններ են պահպանել։ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, իսկ հետագայում՝ Զաքարիա Սարկավագը Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչների անունների կրկնության հետևանքով Վահրամին սխալմամբ նույնացրել են Զաքարյան մեծ Սարգսի հոր հետ։ Այդ իսկ պատճառով հայագիտության մեջ երևան են եկել մի շարք ոչ ճիշտ եզրահանգումներ։ Այսպես, Մ. Չամչյանը կարծել է, թե Վահրամը Զաքարյան ավագ Սարգսի որդին է[1]։ Ղ. Ալիշանը Վահրամյանների տոհմի հիմնադիր է համարել Զաքարյանների նախահայր Խոստրովի (Խոսրով) Քարիմ որդուն[2], որի մասին հիշատակություն կա Հաղբատի անթվական մի արձանագրության մեջ։ Մ. Բրոսեն ենթադրել է, թե Քարիմը և Վահրամը թերևս միևնույն անձնավորությունն են[3]։ Սակայն, ինչպես արդեն իրավացիորեն նկատել է Ա. Շահնազարյանը, «նախ անհասկանալի է, թե ինչպես Վահրամը կարող է Քարիմ դառնալ և մյուս կողմից Քարիմի և Վահրամի ժամանակի մեջ մոտ մի դարու տարբերություն կա»[4]։ Ա. Շահնազարյանին հաջողվել է հայ ու վրաց գրչագիր և հայ վիմական արձանագրությունների համադրությամբ պարզել, որ Վահրամը Զաքարե I որդին է՝ մեծ Սարգսի եղբայրը (վերոհիշյալ Քարիմի եղբայր ավագ Սարգսի թոռը)[5]։ Վահրամը տիրում էր Քուրդ-Վաճառի (Դեբեդ) ձորում գտնվող որոշ փոքր կալվածքների[6] և մահացել է նախքան Օրբելիների դավադրությունը (1178)։ Նրա ավագ որդին՝ Զաքարեն (ըստ Գրիգոր Ականացու՝ պլու Զաքարե)[7] դարձավ քննության

---

1 *Մ ի ք ա է լ Չ ա մ չ ե ա ն, Պատմութիւն Հայոց, հ. III, Վենետիկ, 1786, էջ 148։*

2 *Ղ. Ա լ ի շ ա ն, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 447, հմմտ. նույնի՝ Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 175։*

3 M. B r o s s e t, I' Histoire de la Georgie, St.-Petersbourg, 1851, p. 268.

4 *Ա ս լ ա ն Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դեպի Զորագետ և նախորդները («Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 77)։*

5 *Նույն տեղում։*

6 *Լ. Մ ե լ ի ք ս ե թ-Բ ե կ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (այսուհետև՝ «Վրաց աղբյուրները»), հ. Բ, Երևան, 1936, էջ 13։*

7 *Անվանման այս ձևը հայկական հնագրության համար օրինաչափ՝ երկու բառեղրերի համար միևնույն դրի (տվյալ դեպքում՝ «զ») օգտագործման հետևանք է։ Վերծանության ժամանակ այն պետք է ընկալել երկու բառեղրերի համար՝ պլուզ Զաքարե։ Պլուզ նշանակում է փոքրիկ («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. II, Վենետիկ, 1837, էջ 653)։ Հավանաբար*

առարկա իշխանության հիմնադիրը, իսկ կրտսեր որդի Սարգիսը 1190/1191 թթ. Թամար թագուհուց ժառանգական տիրապետության իրավունքով նվեր ստացավ Ջավախքը՝ Թմոգվի (Թմուկ) կենտրոնով[8] և հիմք դրեց միջնադարյան Վրաստանի մշակութային կյանքում մեծ դեր խաղացած Թմոգվեցիների տոհմին, որն արդեն XIV դ. ընդունեց քաղկեդոնականություն։

Ինչպես Զաքարյան ավատական տան, այնպես էլ Վահրամյանների տոհմի զորեղացման գործում բախտորոշ նշանակություն ունեցավ մեծ Սարգսի դիրքորոշումը 1178 թ. Օրբելիների դավադրության ժամանակ։ Նա սկզբում հարել էր Օրբելիներին և նրանց հովանավորյալ, օրինական թագաժառանգ Դեմետրեին, սակայն հետո, ինչպես վկայում է վրաց պատմիչը, «Դեմետրեից հեռացավ... Սարգիս Մխարգրձելին որդով և եղբորորդով։ Թագավորը նրան ընդունեց սիրալիր ու փաղաքուշ և ցույց տվեց նրա ազնվազարմությանը համապատասխան վստահություն»[9]։

Մեծ Սարգսի այս քայլը պատճառաբանվում է ոչ միայն նրա աներձագ Քուրդ իշխանի ազդեցությամբ, ինչպես ենթադրել է Գ. Հովսեփյանը[10], այլև Գեորգի III-ի խոստումներով և Օրբելիներին ասպարեզից հեռացնելով նրանց տեղը գրավելու ձգտմամբ։ Եվ իրոք, ապստամբությունը ջախջախելուց հետո Գեորգի III հրամայեց «զամենայն ազգատոհմ նոցին (Օրբելիների—Ա. Շ.) և զարու մանուկ նաև զկանայսն... առհասարակ ջնջել և կորուսանել... և այսպես եբարձ ի տանէն Վրաց զանուն նոցա»[11]։ 1185/1186 թթ. Գեորգի III դուստր Թամարը մեծ Սարգսին նշանակեց ամիրսպասալար, նրան շնորհելով նաև նախկինում Օրբելիներին պատկանած Լոռին։ «Թագակիրների պատմությունն ու ներբողյանը» երկի հեղինակը որոշակի չի հաղորդում, թե Գեորգի III և Թամարը ինչո՞վ վարձահատույց եղան վերոհիշյալ ապստամբության ժամանակ Գեորգի III կողմն անցած Զաքարե Վահրամյանին[12]։ Նրա վկայությունից միայն երևում է, որ արդեն 1186 թ. վերջինս պաշտոնապես և հատուկ աստիճանով գտնվում էր արքունական ծառայության մեջ[13]։

Թամարի և նրա առաջին ամուսին Գեորգի ռուսի գահակալության տարիներին հզորության գագաթնակետին գտնվող Վրաստանը նաև հայ զինական ուժերի եռանդուն մասնակցությամբ շրջակա սելջուկյան էմիրությունների դեմ 1185—1187 թթ. ձեռնարկում է մի շարք հաջող արշավանքներ[14]։ Դրանց գրեթե միշտ մասնակցում էին Զաքարյան հորեղբորորդիները։ Նրանք՝

Զաքարե Վահրամյանին պլուզ Զաքարե են կոչել նրան ժամանակակից Զաքարե ամիրսպասալարից տարբերելու համար։ Այս երևույթի բազմաթիվ օրինակներ կան նաև հայ վիմական արձանագրություններում (Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 375—380)։

8 «История и восхваление венценосцев», груз. текст перевел, предисловием и примечаниями снабдил проф. К. С. Кекелидзе, Тбилиси, 1954, стр. 52.

9 Նույն տեղում, էջ 29։

10 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս—Լիբանան, 1969, էջ 3։

11 «Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 389։

12 Հմմտ.՝ Ասլան Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 81։

13 «История и восхваление венценосцев», стр. 41—42.

14 Նույն տեղում, էջ 41—43։

«...հիանալի պատանիներ, ավագագույններ Զաքարիան և Զաքարիան պաշտոնապես ընդունված [պալատում], Իվանեն ու Սարգիսը դեռևս չընդունված, արշավանք ձեռնարկեցին դեպի Դվինի երկիրը։ Այն բանից հետո, երբ նրանք հաղթանակելով՝ գրաված ավարով հետ էին դառնում, նրանց հասան Դվինի զորքերը։ Առյուծների գոտեմարտը հիշեցնող դաժան մարտում այդ զորքերը փախուստի մատնվեցին։ Հաղթական ու փառաբանված նրանք հարուստ ավարով ներկայացան թագավորներին (Թամարին և Գեորգի ռուսին—Ա. Շ.), որոնք նրանց ողորմածաբար շնորհակալություն հայտնեցին»[15]։ Այնուհետև Զաքարյան հորեղբորորդիները վրաց իշխանների հետ համատեղ մասնակցում են «Գանձակից ներքև մինչև Վելաքունի (Գեղարքունի—Ա. Շ.) և ապա Արաքսից մինչև Մասիս»[16] մի այլ արշավանքի, որը դարձյալ հաջողությամբ է պսակվում։ Այս արշավանքներից առաջինը «Սարգիս և Վահրամ Մխարգրձելների որդիներն» իրագործել են սեփական, այսինքն՝ հայերից կազմված զորքերով[17]։

Թամարի նկատմամբ իրենց հավատարմությունը նրանք կրկին ապացուցեցին 1190/1191 թթ. նրա դեմ Գեորգի ռուսի և վրաց խոշոր իշխանների ապստամբության ժամանակ։ Այսպես, օրինակ, Սոմխիթում տեղի ազնվաուրներից Թամարին հավատարիմ էր մնացել միայն Զաքարե Վահրամյանը[18]։ Զաքարյան մեծ Սարգսի մահվանից հետո (1187) ամիրսպասալար նշանակված Գամրեկել Թորելու և «Սարգիս և Վահրամ Մխարգրձելների որդիների» ակտիվ աջակցությամբ ապստամբներին ջախջախելով՝ Թամարը Գեորգի ռուսին կրկին արտաքսեց Վրաստանից։

XII դ. վերջին քառորդում հզորացող կենտրոնական իշխանության դեմ տարբեր միջոցներով պայքարող հին իշխանական խոշոր տների ընդվզումներին վերջ տալու նպատակով Թամարը դիմեց կտրուկ միջոցների. նա խլեց Գեորգի ռուսի աջակիցների կալվածքները և հաշվեհարդար տեսավ նրանց հետ։ Թերևս ոչ միայն Զաքարյան իշխանական տանը երախտահատույց լինելու, այլև հանձին նրա ներկայացուցիչների վրաց Բագրատունիների համար ամուր հենարան ստեղծելու նպատակով է, որ Թամարը շռայլորեն վարձատրեց նրանց։ Զաքարե Վահրամյանին Թամարը 1190/1191 թթ. «շնորհեց Գագր և Քուրդ-Վաճառը, մինչև Գանձակ՝ բաղում քաղաքներով, բերդերով, բնակավայրերով կամ որպես լիակատար սեփականություն, կամ՝ կիսասեփականություն (պայմանական հողատիրության իրավունքով—Ա. Շ.)»[19]։ Զաքարե Վահրամյանին շնորհված Գազն իր շրջակայքով պատկանում էր

---

15 Նույն տեղում, էջ 41—42։

16 Նույն տեղում, էջ 42—43։

17 Այդ արշավանքների ժամանակագրությունը տե՛ս П. М. Мурадян, К хронологии некоторых событий в Грузии и Армении конца XII в. («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 125—135)։

18 «История и восхваление венценосцев», стр. 49.

19 Նույն տեղում, էջ 51։ Վրաց պատմիչի այս վկայությունը մասամբ է համապատասխանում իրականությանը։ Այդ ժամանակ Գագր շրջակայքից մինչև Գանձակ ընկած շրջանները պատկանում էին Գանձակի Սելջուկյան աթաբեկությանը և, բնականաբար, Թամարը դրանք չէր կարող տալ Վահրամյաններին։ Ինչպես հետո կտեսնենք, Վահրամյաններն այդ հողերը գրավեցին հետագայում և դրանց տիրում էին ժառանգական տիրույթի իրավունքով։ Վրաց պատմիչը հավանաբար նկատի ունի այդ հողերի վրա Վահրամյանների ունեցած իրավունքների ճանաչումը Թամարի կողմից։

Գեորգի ռուսի աջակից, Վրաստանի մսախուրթ-ուխտուցես Վարդան Դադիանին, որի հողերի մնացած մասը և պաշտոնը Թամարը շնորհեց Իվանե Զաքարյանին։

Ավատական ընդվզումների դեմ թագավորական իշխանության տարած հաղթանակը, Թամարի ամուսնությունը Դավիթ Սոսլանի հետ (1188) և Գամրեկել Թորելու մահվանից հետո Զաքարե Զաքարյանի ամիրսպասալար նշանակվելը Վրաստանին հնարավորություն տվեցին շրջակա սելջուկյան էմիրությունների դեմ վարելու ավելի ակտիվ արտաքին քաղաքականություն։ Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչները «լինելով հմուտ ոչ միայն որպես ռազմական, այլև քաղաքական գործիչներ, ժամանակին կարողացան հասկանալ ստեղծված քաղաքական իրադրությունը՝ մի կողմից երկրի հարավարևելյան սահմաններն ապահովելու համար Վրաց ֆեոդալական պետության ձգտումը, մյուս կողմից, հայ ժողովրդի ցասումն ու ատելությունը օտար նվաճողներ սելջուկ-թուրքերի դեմ, հայրենիքի ազատագրման պայքարին նրա պատրաստակամությունը։ Ստեղծված այդ միանգամայն նպաստավոր իրադրությունը նրանց անհրաժեշտ էր, որպեսզի իրականացնեին իրենց քաղաքական նպատակը, այն է՝ Վրաստանի հովանավորությամբ, նրա զինված ուժերի անմիջական մասնակցությամբ Հայաստանի տերիտորիան ազատագրեին սելջուկ-թուրքերից, վերականգնեին երկրի քաղաքական անկախությունը, համախմբեին հայկական ֆեոդալական ուժերը...»[20]։

Առաջին հարվածը հասցվեց ներքին գահակալական կռիվների հետևանքով թուլացած Գանձակի Ելտկուզյան աթաբեկությանը, որի տիրապետության տակ էին Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան մի շարք շրջաններ։ 1195 թ. հունիսի մեկին (որոշ աղբյուրներով 1198 թ.) տեղի ունեցած Շամքորի ճակատամարտում Զաքարե ամիրսպասալարի և Դավիթ Սոսլանի ղեկավարությամբ գործող հայ-վրացական բանակները ջախջախեցին Ելտկուզյան աթաբեկ Աբու-Բաքրի զորքերին։ Առաջապահ զորքերի կազմում այդ ճակատամարտին մասնակցում էր նաև Զաքարե Վահրամյանը[21]։ «Գանձակի աթաբեկության թուլացումը խիստ նպաստավոր եղավ Զաքարյանների Վահրամյան ճյուղի զորեղացման համար»[22]։ Վահրամյանները, օգտագործելով Գանձակի Ելտկուզյան աթաբեկության թուլացումը, իրենց ազգականների օգնությամբ կարողացան գրավել Հայաստանի հյուսիս-արևելյան մի շարք շրջաններ։ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ «միւս իշխանն, Զաքարէ անուն, և եղբայրն իւր Սարդիս, և միւս Սարդիս, հայրն Շալուէի և Իւանէի, ազգականք մեծ իշխանացն, ձեռնտուութեամբ նոցին՝ առին և նոքա բազում գաւառս ի պարսից և բերդս ամուրս՝ զԳարդման, զՔարհերձ, զԵրգեվանք, զՏաւուշ, զԿածարէթ, զՏէրունականն, և զԳագ, և զՇամքոր քաղաք ի նեղ էարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ, հայրն Աղբուղին, պապն Վահրամայ, Զաքարէի և Իւանէի»[23]։ Ինչպես տեսնում ենք, Կիրակոս Գանձակեցու վկայու-

---

20 Լ. Հ. Բարայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, էջ 36—37։

21 «История и восхваление венценосцев», стр. 61.

22 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 132։

23 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 163։ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատ-

թյամբ ոչ միայն ճշտվում է վրաց պատմիչի վերոբերյալ տեղեկությունը Զաքարե Վահրամյանին Թամարի շնորհած հողերի մասին, այլև Վահրամյանների տոհմածառը, որը հաստատվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2272 ձեռագրի մի հիշատակարանով (1252 թ.)։ Ինչպես երևում է աղբյուրների անուղղակի վկայություններից, վերոհիշյալ նվաճումները (բացառությամբ Շամքորի) տեղի են ունեցել XIII դ. առաջին տասնամյակում։ Մասնավորապես Տավուշը գրավվել է 1203 թ.[24]։ Այսպիսով, Զաքարե Վահրամյանին հաջողվեց համեմատաբար կարճ ժամանակամիջոցում (երկու տասնամյակում) ստեղծել մի մեծ իշխանություն, որը դարձավ Վրաստանի սահմանապահ հզոր կուսակալություններից մեկը՝ սահմանակից Գանձակի աթաբեկությանը։ Իշխանության կենտրոնն էր այժմյան Նոյեմբերյանի շրջանի և Ադրբեջանական ՍՍՀ Ղազախի շրջանի սահմանաբաժնում գտնված Գագ բերդը[25]։

Միացյալ հայ-վրացական զորքերի կազմում Զաքարե Վահրամյանը մասնակցել է նաև 1204 թ. Բասենի ճակատամարտում Իկոնիա-Ռումի սուլթան Ռուքն էդ-Դինի զորքերի ջախջախմանը[26]։ Աղբյուրները նրան վերջին անգամ հիշատակում են Բասենի ճակատամարտից հետո իր հորեղբորորդիների հետ Ատրպատական (Ջուլֆա, Մարանդ, Թավրիզ) կատարած հաջող արշավանքի կապակցությամբ[27]։

Վահրամյանների մասին մեր ունեցած հաջորդ տեղեկությամբ պարզվում է, որ Զաքարե Վահրամյանի որդի Վահրամը մսախուրթ-ուխուցես է նշանակվել (1212/1213 թթ.)։ Հետևաբար, Զաքարե Վահրամյանն արդեն կենդանի չէր, այլապես նա կնշանակվեր այդ պաշտոնում։ Ինչպես երևում է Հաղբատի Խաթունաշեն եկեղեցու արևելյան պատի անթվակիր արձանագրությունից, Զաքարե Վահրամյանի կինն էր Խաչենի իշխանազուններից Դեսոմյան Հասա-

---

մության» 1909 թ. հրատարակության օգտագործման հետևանքով (որտեղ հղված հատվածի «և միւս Սարգիս» դարձվածքի սղված լինելը հանգեցրել է տեքստի իմաստափոխության), որոշ հայագիտական աշխատություններում Շալուեի և Իվանեի հայր Սարգիս Ախալցիխեցին է համարվել Զաքարե Վահրամյանի հղայրը։ Սրանց ազգակցական կապի հարցը կարոտ է մասնավոր քննության։

24 «Մանր ժամանակագրություններ», հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 392, 399, ծան. 29։

25 «Հայ ժողովրդի պատմության» համալսարանի հրատարակությունում (Երևան, 1972, էջ 242) վրիպմամբ Վահրամյանների աթոռանիստ է դիտված Ամբերդը, իսկ հոգևոր կենտրոն՝ Հովհանավանքը, որոնց խնդրո առարկա ժամանակաշրջանում տիրում էին Վաչուտյանները և երբեք Վահրամյաններին չեն պատկանել։ Ինչ վերաբերում է Վահրամյանների իշխանության հոգևոր կենտրոնին, ապա Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ XIII դ. առաջին կեսին Վահրամյանների տիրույթների արքեպիսկոպոսն էր Հովհաննես Տուեցին (Կիրակոս Գանձակեցի, էջ 153), որի նստավայրն էր Նոր-բերդի Կյուրիկյան իշխանության տարածքում տեղադրված Նոր Վարագ վանքը։ Այն գտնվում է այժմյան Շամշադինի շրջանի Հախում գյուղի մոտ։

26 «История и восхваление венценосцев», стр. 78. Ակադեմիկոս Հ. Մանանդյանը ելնելով Բասենի ճակատամարտի մասին Իբն ալ-Ասիրի տված հակասական ու թյուր տեղեկություններից («Материалы по истории Азербайджана из Тарих-ал-Камиль Ибн-ал-Асира», Баку, 1940, стр. 128), գրում է, որ «1204/5 թվականի կռվում (Բասենի ճակատամարտում—Ա. Շ.) սպանվել է փոքր Զաքարեն (հավանորեն Վահրամի որդին)» (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 136, ծան. 1)։ Իրականում ճակատամարտում սպանվել էր ոչ թե Զաքարե Վահրամյանը, այլ նրա ձին («История и восхваление венценосцев», стр. 78).

27 Նույն տեղում, էջ 82։

նի դուստր Խաթունը, որն այդ եկեղեցին կառուցել է իր եղբայրների հիշատակին[28]։ Վահրամն իր նստավայր Գադ ամրոցի անունից կոչվում էր Գագեցի։ Նա շարունակեց հոր ջանքերը Վահրամյանների իշխանության տարածքն ընդարձակելու ուղղությամբ և Իվանե աթաբեկի օգնությամբ գրավեց Շամքոր քաղաքն իր շրջակայքով[29]։ Դա Զաքարյանների աջակցությամբ իրենց իշխանությունն ընդարձակելու ուղղությամբ Վահրամյանների ունեցած վերջին հաջողությունն էր, որի հետագա զարգացմանը խանգարեցին սկզբում Ջալալ ադ-Դինի, իսկ հետո՝ մոնղոլական ավերիչ արշավանքները։

Այսպիսով, XIII դ. 10—20-ական թվականներին Վահրամյանների իշխանությունը տարածվում էր Քուրդ-Վաճառից Շամքոր և Կուր գետից մինչև Գետաբեկ, ներառնելով Տավուշ, Գարդման, Շակաշէն և Փառիսոս գավառների որոշ շրջանները՝ Շամքոր քաղաքով և Գագ, Տավուշ, Կածարէթ, Քարհերձ, Սրգեվանք, Տերունական, Գավարզին ու Գարդման բերդերով հանդերձ[30]։

Վահրամյանների իշխանությունը հատկապես Շամքորի գրավումից հետո ձեռք բերեց բացառիկ կարևոր ստրատեգիական դիրք։ Նրա տարածքով էր անցնում Բարդա (Պարտավ)—Գանձակ—Շամքոր—Տփղիս ճանապարհը, որն Ատրպատականը և Շիրվանը Վրաստանի ու Հյուսիսային Հայաստանի հետ կապող ամենակարճ ուղին էր և ուներ ռազմական ու առևտրատնտեսական խոշոր նշանակություն։ Պատահական չէ, որ թե՛ Ջալալ ադ-Դինի և թե՛ մոնղոլական հրոսակախմբերը Հայաստան և Վրաստան ներխուժեցին հենց այս ճանապարհով։

Բնականաբար, վրաց Բագրատունիներն իրենց հետագա գործունեության ընթացքում այս հանգամանքը հաշվի չառնել չէին կարող։ Վրաստանի սահմաններն ամրապնդելու ուղղությամբ նրանց վարած քաղաքականության հետևանքով էր, որ «Հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնաշխարհը պատած էր զինվորական իշխանությունների մի եռատակ և քառատակ շղթայով, որ ամուր պատվար էր հանդիսանում Վրաց թագավորության համար»[31]։ Դրանցից ամենախոշորը և կարևորը Վահրամյանների իշխանությունն էր, որը կոչ-

---

28 Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 220։ Անդրադառնալով արձանագրության թվագրմանը, Կ. Ղաֆադարյանը գրում է. «Նրա մեջ հիշատակվող անձինք աներկբայորեն ապրել են 13-րդ դարում» (նույն տեղում, էջ 62)։ Արձանագրության «որ բերաւ ի Խաչենոյ յամուսնութի(ւն) Զաքարիա, որ էր տէր Գադա եւ Տաւշ, Գարդմանա եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց» հատվածից երևում է, որ այն գրվել է Զաքարե Վահրամյանի մահվանից հետո՝ ամենայն հավանականությամբ XIII դ. առաջին քառորդում։

29 Թե՛ Վարդան Արևելցու և թե՛ Ստեփանոս Օրբելյանի վկայություններից երևում է, որ Շամքորը գրավվել է Զարեքից հետո և Որոտնից առաջ («Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 140, Ստեփանոս Օրբելյան, էջ 392)։ Վարդան Արևելցու վկայություններից հետևում է, որ Զարեքը գրավվել է 1214 թ. հետո, իսկ Որոտնը՝ 1219 թ. (Վարդան Արևելցի, էջ 141—142), ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Իվանե աթաբեկը Զարեքը պաշարել էր 1216 թ. (Ստեփանոս Օրբելյան, էջ 352)։ Հետևաբար, Շամքորը գրավվել է 1216—1219 թթ. արանքում։ Վրաց աղբյուրները Շամքորի գրավման մասին խոսելով հանդերձ թվական չեն նշում։

30 Կիրակոս Գանձակեցի, էջ 153, 163, 242—243, Վարդան Արևելցի, էջ 140—141, 144—145, «Վրաց ժամանակագրության (1207—1318)», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 62։

31 Կարապետ եպիսկոպոս, Նյութեր հայ մելիքության մասին, պրակ Բ, Էջմիածին, 1914, էջ 27։

ված էր պաշտպանելու Վրաց պետության սահմանները Գանձակի աթաբեկության կամ նրանից եկող այլ թշնամիների ոտնձգություններից։ Որպես սահմանապահ ուժեղ իշխանություն, այն համարվում էր կուսակալություն, իսկ Վահրամյանները՝ կուսակալներ, որոնք ունեին նաև իրենց դրոշը։ «Թամար թագուհու պատմության» հեղինակի վկայությամբ՝ «Ներքին [մասում] առաջին կուսակալությունն Գագումն էր, որը Վահրամի հոր՝ Զաքարիս Մխարգրձելիի ձեռքն էր. և սրանք [էին, որ] կուսակալություն էին անում, քաջարի մարդիկ և պատերազմներում միանգամայն փորձված ու հաղթող...»[32]։ Դժվար չէ կռահել, որ Վահրամյանների իշխանությունը հիշեցնում էր հին հայկական բդեշխությունները, որոնք կիսանկախ էին կենտրոնական իշխանությունից և կոչված էին պաշտպանելու Հայաստանի սահմանները։

Ինչպես արդեն տեսանք, Զաքարե Վահրամյանն իր հողերի մի մասին տիրում էր պայմանական, իսկ մյուս մասին՝ ժառանգական սեփականության իրավունքով։ Տրամաբանական է, որ պայմանական տիրապետության իրավունքով Վահրամյանները տիրում էին մինչև 1190/1191 թթ. Վարդան Դադիանին պատկանած Գագն իր շրջակայքով՝ կուսակալություն կատարելու դիմաց։ Հենց դա էր պատճառը, որ արևելքից արևմուտք 100 կմ ձգվող իշխանության կենտրոնն էր նրա արևմտյան սահմանամասում գտնվող և բուն վրացական հողերին սահմանակից Գագ բերդը։ Սեփական ուժերով և իրենց ազգականների աջակցությամբ նվաճված հողերը Վահրամյաններին էին պատկանում որպես սեփականություն՝ «հայրենիք»։ Այդ է վկայում Վարդան Արևելցին, պատմելով Վահրամ Գագեցու մոնղոլներին ենթարկվելու և նրանցից իր տիրույթները ետ ստանալու մասին. «Ապա եկեալ առնոյր զառեալն ի նոցանէ զդղեակն և զգաւառն, որ սեփական լեալ էր նոցա ի հայրենեաց»[33]։

Լայնածավալ կալվածքներին տիրապետելը և սեփական զորքի առկայությունը, որը ինչպես ճիշտ նկատել է Պ. Մուրադյանը, «բնականաբար կազմված կլիներ գարդմանցիներից, քարհերձցիներից, երդեվանցիներից, տավուշցիներից, կածարեթցիներից, տերունականցիներից, գագեցիներից և այլն, մի խոսքով հիմնականում հայերից»[34], վրաց արքունիքում Վահրամ Գագեցու դիրքերի հետագա ամրապնդման հիմք էին։ Եվ եթե դրան գումարենք Վահրամ Գագեցու խելամտությունն ու խիզախությունը, ապա պարզ կդառնա, թե ինչու 1212/1213 թթ. աթաբեկ դարձած Իվանե Զաքարյանի փոխարեն մսախուրթ-ուխուցես՝ «գլուխ իշխեցող և հրամ[ան]ատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ»[35] նշանակվեց Վահրամ Գագեցին, որը վրաց աղբյուրների վկայությամբ՝ արժանի և արշավանքներում հաղթական մարդ էր[36]։ Պ. Մուրադյանը գտնում է, որ Վահրամ Գագեցու այս նշանակումը պետք է դիտել «իբրև զուտ պատիվ և ոչ զուտ արքունական ծառայություն»[37]։ Այս պնդումը միանգամայն համապատասխանում է իրականությանը, քանի որ Վահրամ Գագեցին, որն ի պաշտոնե պարտավոր էր

---

32 «Վրաց աղբյուրները», հ. Բ, էջ 34։

33 Վարդան Արևելցի, էջ 144։

34 «Վրաց ժամանակագրություն», Առաջաբան, էջ 31։

35 Գարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 887։

36 «Վրաց աղբյուրները», հ. Բ, էջ 24։

37 «Վրաց ժամանակագրություն», էջ 197—198, ծան. 32։

մշտապես գտնվել արքունիքում, որպես կուսակալ շարունակ լինում էր իր տիրույթներում (Գագ, Գարդման, Քարհերձ և այլն)։ Վրաց արքունիքում Իվանե աթաբեկի և Վահրամ Գագեցու ազդեցիկ դիրքի մասին է վկայում այն, որ նրանք, դժգոհելով Գեորգի Լաշայի թեթևաբարո վարքագծից, սպառնում են չենթարկվել նրան և ստիպում երդվել, որ կգործի միայն իրենց խորհուրդներով[38]։ Այս փաստը նաև խոսում է վրաց Բագրատունիների թուլացման և երկրում կենտրոնախույս տրամադրությունների ուժեղացման մասին։

Վահրամ Գագեցին ազդեցիկ դեր էր խաղում նաև այլ հարցեր լուծելիս։ Դա երևում է մասնավորապես Նորավանքի Սուրբ նշանի (խաչի) շուրջը 1216 թ. ծագած վեճի մասին Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկություններից[39]։ Վեճը հարթելու համար Իվանե աթաբեկը Դվինում ժողով է հրավիրում. «Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր, հրամայէր քննել՝ զԲուբայն և զՄարծուանն, զԻվան դպէլն և զՄեմնա Ջագէլն (տպ. զմեմնաշաղէլն), զմեծ Ճղանդիտէլն՝ որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծինամծղաւն (տպ. զՇիրամ ծղաւրն) Վարձէոյ, զծինամղաւրն (տպ. զՇիրամ ծղաւրն) Պղնձահանիցն և զմեծ մամթավարն (resp. մամամթավարն) Գարշտէուցն, զԳագեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում զդէղեպուլք ևս...»[40]։

Սելջուկյան լծից թազատթիվ հայկական շրջանների ազատագրումը և Հյուսիսային Հայաստանի տնտեսական վերելքը հայկական մշակույթի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծեցին. «Շինեցան և բազում վանորայք, որ ի վաղուց ժամանակէ անտի աւերեալ էին ի հինից Իսմայէլիվերստին նորոգեցան եկեղեցիք... շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք, որ ի հնոցն չեւ էին լեալ վանք...»[41]։ Դրանցից էր խնդրո առարկա իշխանության տարածքում XIII դ. 10-ական թվականներին Մխիթար Գոշի լավագույն աշակերտ, հռչակավոր վարդապետ Վանականի հիմնարկած Խորանաշատի վանքդպրոցը, ուր ուսանելու էին գալիս միջնադարյան Հայաստանի ամենահեռավոր ծայրերից անգամ։ Խորանաշատում Վանական վարդապետին աշակերտել են Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ականացին և ուրիշներ։

Խորանաշատը միաժամանակ հայ գրչության խոշոր կենտրոն էր։ Մեզ են հասել այնտեղ գրչագրված 11 ձեռագրեր (երկուսը՝ Վանական վարդապետի գործունեության շրջանից)։ Դրանցից է «Բարոյախոսի» մեզ հասած ամենահնագույն՝ 1223 թ. ընդօրինակությունը[42]։ Դժբախտաբար, մեր ձեռքի տակ

---

38 Նույն տեղում, էջ 48։

39 Վեճի առարկա խաչը, Վասակ Խաղբակյանը Նորավանքից վերցրել և նվիրել էր Իվանե աթաբեկին, որն այն պահում էր Պղնձահանքում։ Խաչի նկատմամբ հավակնություններ ունեին նաև Լիպարիտ և Էլիկում Օրբելյանները։

40 Ստեփանոս Օրբելյան, էջ 359։ Բնագրային սրբագրումները՝ Պ. Մուրադյանի («Լրաբեր», 1973, № 1, էջ 42)։ Լ. Մելիքսեթ-Բեկն անդրադառնալով վեճը հարթելու համար հրավիրված դատական ատյանի կազմին, մասնավորապես գրում է. «իսկ Գագի և Մածնաբերդի (Մահկանաբերդի) տերերի անունները չեն հիշված» (Լ. Մելիքսեթ-Բեկ, Մի վկայություն գերագույն դատակազմության և դատավարության մասին Զաքարյան Հայաստանում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1945, № 3—4, էջ 78)։ Սակայն արդեն տեսանք, որ 1216 թ. Գագի տերն էր Վահրամ Գագեցին։ Ի դեպ, Լ. Մելիքսեթ-Բեկը Մածնաբերդը և Մահկանաբերդը նույնացնելով սխալվում է։ Դրանք տարբեր բերդեր են։

41 Կիրակոս Գանձակեցի, էջ 164։

42 Մատենադարան, ձեռ. № 2107։ Ն. Մառը հենվելով Ս. Տեր-Ավետիսյանի տված տեղե-

եղած գրչագիր աղբյուրները և Խորանաշատի վիմական արձանագրությունները ոչինչ չեն հաղորդում վանքի հիմնադրման գործում Վահրամ Գագեցու դերի մասին։ Սակայն անկասկած է, որ առանց վերջինիս հովանավորության և աջակցության Վանական վարդապետը չէր կարող նրա ժառանգական տիրույթում վանք կառուցել։

Այսպիսով, քաղաքական և մշակութային այն վերելքը, որ առկա էր Հայաստանում XII դ. 20-ական թվականներից մինչև XIII դ. 20-ական թվականները, ցայտուն կերպով դրսևորվեց Վահրամյանների իշխանության օրինակով։ Դժվար է կռահել, թե ինչպիսին կլիներ այդ վերելքի կորագիծը հետագայում, եթե չլինեին Ջալալ ադ-Դինի և ապա մոնղոլական ավերիչ արշավանքներն ու նվաճումները։

ИЗ ИСТОРИИ КНЯЖЕСТВА ВАГРАМИДОВ

А. И. ШАХНАЗАРЯН

Резюме

В конце XII—начале XIII вв. в освобожденных из-под сельджукского ига армянских областях образовался ряд княжеств. Одним из них было княжество Ваграмидов, основатель которого Захария Ваграмид происходил из Захаридского рода.

Образование княжества было результатом тех освободительных войн, которые вели армянский и грузинский народы против Гянджийского Илдегизского атабекства. Благодаря этим войнам были освобождены из-под сельджукского ига области Тавуш, Гардман, Шакашэн, Парисос со многими крепостями и городом Шамхор, которые вошли в состав княжества, игравшего значительную роль в защите юго-восточных границ Грузии и Северной Армении. Его центром была крепость Гаг.

կությունների վրա, ենթադրել է, որ «Բարոյախոսի» այդ ընդօրինակության գրիչը Ս. Տեր-Ավետիսյանի ընթերցմամբ Խորանաշատի ՈԿԹ (1220) թվակիր արձանագրության մեջ հիշատակված Ստեփանոսը կարող է լինել, եթե նա իրեն Աղթամարցի է անվանում. ըստ իր ձեռնադրման վայրի (Н. Марр, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VI, стр. XII, ук. I). *Իրականում այդ արձանագրության թվագիրն է Ջ (1251)։ Ահա այդ արձանագրության մեջ հետաքրքրող հատվածը. «Ի թվին. Ջ [700=1251].... ես, Ստեփան ի գաւառն յԱրճիշո ի հռչակաւոր ուխտն յԱրիձորս եկի առ ս[ուրբ] վարդապետն Վանական եւ միաբանեցա ս[ուրբ] ա[ստուա]ծածնիս եւ Գրիգորիս վարդապետ. եւ սակաւ. ընչիւք աւգնական եղաք ժամատանս...» (Կարո Դաֆթարյան, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-բերդի Կյուրիկյան իշխանության. մասին (Արմֆանի «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 175)։ Արձանագրության բովանդակությունն. աներկբա վկայում. է, որ վերոհիշյալ Ստեփանոսը Խորանաշատին միաբանել է հենց 1251 թ. և մասնակցել վանքի ժամատան շինությանը։ Հետևաբար նա չէ 1223 թ. ընդօրինակված «Բարոյախոսի» գրիչը։*